գամ նա ոտքով Պոլիս էր գնացել, հարուստ ամիրաների դռները բախելու եւ իր հիմնարկութիւնների համար օժանդակութիւն խնդրելու: Նա միայնակ ստեղծեց այն բոլորը. նա առաջին օրինակը եղաւ, որ դատարկամոլ եւ ձրիակեր կրօնաւորների անկելանոց դարձած վանքին տոեց մի այնպիսի կազմակերպութիւն, որ նա սկսեց այնուհետեւ ծառայել իբրեւ մի բարձր հիմնարկութիւն ժողովրդի հոգեւոր, բարոյական եւ մտաւոր կրթութեան համար:

Որքա՜ն մեծ անհամբերութեամբ ցանկանում էի տեսնել այդ մարդուն, լսել նրա ձայնը եւ խօսել նրա հետ: Նա մեզ երկար սպասել չտոեց, շուտով վերադարձաւ գութանի մօտից, քրտնած, փոշիների մէջ թաթախուած: Նախ վազեց իր սենեակը, երեւի լոացոելու համար, յետոյ եկաւ մեզ մօտ: Նա ուրախ էր, որովհետեւ նորաձեւ գութանի առաջին փորձը յաջողութիւն էր խոստանում:

Նա դեռ երիտասարդ էր, երեսունեւոեց տարեկան հազիւ կը լինէր. այդ հասակի համեմատ՝ «հայրիկէ մականունը շատ օտարոտի կարող էր լինել, եթէ նա չունենար մի սիրող հօր խնամքը, հոգածութիւնը եւ բոլոր բարեմասնութիւնները՝ թէ դէպի իր վանքն ու միաբանութիւնը եւ թէ դէպի ժողովուրդը: Բարձրահասակ էր նա եւ ամուր կազմոածքով. երեւում էր, որ ծոմը, մշտական աղօթքը եւ խիստ ճգնութիւնները, որոնք մեր անապատականների բարեպաշտութեան գլխաւոր արդիւնքն են համարւում, չէին մաշել նրա մարմինը: Գլխին վեղար չունէր. շագանակի գոյն խիտ մազերը կիսով չափ ծածկում էին նրա լայն ճակատը եւ, դէպի ետ սփրռոելով, անփոյթ կերպով թափւում էին հզօր ուսերի վրայ: Մօրուքը թաւամազ էր, որպէս անապատական առիւծի բաշը: Ինչ որ աւելի նշանաւոր էր նրա հեզ, միեւնոյն ժամանակ այրական դէմքի վրայ՝ դրանք էին արծոի խոշոր աչքերը եւ արծոի կտցածեւ քիթը, որոնք թռչունների այդ վեհափառ արքայի բնաւորութեան յատկանիշներն էին արտայայտում, թէ՛ նրա հեռատեսութիւնը եւ թէ՛ նուրբ հոտառութիւնը: Գուցէ այդ էր պատճառը, որ նա ստացել էր մի երկրորդ մականուն եւս՝ «Վասպուրականի արծիւ»: Հագուստը պարզ էր եւ վայելուչ, իսկ վարողութեան ձեւերի մէջ խիստ հասարակ էր նա եւ անկեղծ: Նայելով այդ կրօնաւորի վրայ, ի նկատի առնելով նրա անցեալը եւ ներկան, իսկոյն երեւում էր՝ մինչեւ շէնականի աղքատ խրճիթը խոնարհոած մարդու ռամկասիրութիւն, ռամկի բոլոր առաքինութիւններով, ռամկի բոլոր անփառասիրութեամբ, եւ մարդասիրական բարձր գաղափարներով ոգեւորոած մի եկեղեցականի անձնազոհութիւն, որ իր աշխատութեան հոգեւոր մխիթարութիւնը